

## ՀՀ ֆինանսների նախարարություն

### Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 11/8

22 մարտի 2016 թ.

Քննարկվեց քաղաքացի Սվետլանա Գրիգորյանի գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 25.01.2016թ-ի թիվ 77 որոշման դեմ:

#### **Սվետլանա Գրիգորյանի գանգատում բերված փաստարկները.**

Սվետլանա Գրիգորյանը հայտնում է, որ 2003թ-ին աշխատել է Նաոա Մանթաշյանի սրճարանում որպես մատուցողուհի և ստացել է 35.000 դրամ աշխատավարձ:

Սվետլանա Գրիգորյանը խնդրում է պատասխանել, թե ինչ ակտի մասին է խոսքը: Այդ ակտի մասին նա տեղեկացել է միայն 13 տարի հետո:

Սվետլանա Գրիգորյանն այցելել է և Իջևանի ՏՀՏ և Դիլիջանի ՏՀՏ և պահանջել է, որպեսզի պարզեն, թե երբ և ինչ հանգամանքներում է գրվել այդ ակտը և իրեն տրամադրեն ակտի օրինակը, սակայն պարզվել է, որ որևէ փաստաթուղթ առկա չէ:

Սվետլանա Գրիգորյանը հայտնում է նաև, որ հնարավորություն չունի վճարելու իրեն առաջադրված գումարը:

Ելնելով վերոգրյալից՝ Սվետլանա Գրիգորյանը խնդրում է վերանայել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 25.01.2016թ-ի թիվ 77 որոշումը:

#### **ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննարկելով Սվետլանա Գրիգորյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 25.01.2016թ-ի դրությամբ նրա չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 98.500 դրամ, որոնք առաջացել են ՀՀ ԿԱ ՊԵԿ Իջևանի ՏՀՏ 13.02.2003թ-ի թիվ 205272 ստուգման ակտով:

Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 25.01.2016թ-ին ընդունվել է թիվ 77 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Սվետլանա Գրիգորյանից 98.500 դրամ դրամ պարտավորության գումար գանձելու մասին:

Քննարկվող դեպքում Որոշման մեջ մատնանշված պարտավորությունը գանձման առաջադրելու համար հիմք է հանդիսացել ՀՀ ԿԱ ՊԵԿ Իջևանի ՏՀՏ 13.02.2003թ-ի թիվ 205272 ստուգման ակտով լրացուցիչ գանձման առաջադրված պարտավորությունը: Սակայն, տվյալ դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ նշված ստուգման ակտը փաստացի առկա չէ: Մասնավորապես, նիստի ընթացքում Հանձնաժողովը ցանկություն հայտնեց ծանոթանալ Որոշման կայացման հիմք

հանդիսացած ՀՀ ԿԱ ՊԵԿ Իջևանի ՏՀՏ 13.02.2003թ-ի թիվ 205272 ստուգման ակտին: Սակայն, հարկային մարմնի ներկայացուցիչը հայտարարեց, որ նշված ակտը փաստացի առկա չէ: Այսինքն ստացվում է, որ Որոշումը կայացվել է դրա կազմման համար հիմք հանդիսացող ապացույցի՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ Իջևանի ՏՀՏ 13.02.2003թ-ի թիվ 205272 ստուգման ակտի, բացակայության պայմաններում:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի համաձայն՝ Անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

Քննարկվող դեպքում, Որոշմամբ գանձման առաջադրված պարտավորության առկայության, դրա հիմնավոր լինելու ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը:

Այսպիսով, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Որոշմամբ գանձման առաջադրված պարտավորության ապացուցման պարտականությունը կրել է վարչական մարմինը, ինչպես նաև այն, որ Որոշումը կայացվել է Սվետլանա Գրիգորյանի պարտավորությունը հիմնավորող ապացույցի՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ Իջևանի ՏՀՏ 13.02.2003թ-ի թիվ 205272 ստուգման ակտի, բացակայության պայմաններում, նշված պարտավորությունը չի կարող հիմնավոր համարվել, հետևապես նաև՝ առաջադրվել գանձման:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում Որոշումը կայացվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի դրույթների խախտմամբ, հետևապես ղեկավարվելով նույն օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի դրույթներով գանգատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝**

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 25.01.2016թ-ի թիվ 77 որոշումը:

**Հանձնաժողովի նախագահ՝**

  
**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**

